



2

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N.Y.

Թիւ 576
Մարտ 8, 1956

Պատուարժան
Մխական Խորհուրդ
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Պինկիէմթըն.

Ազնիւ սիրելիք մեր,

Ստացած ենք Մարտ 1, 1956 թուակիր ձեր ծախական տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիր թէ Տօքթ. Բապերթ Պաղտասարեանի ատենապետութեամբ տեղի ունեցած է Համայնքին Մխական Խորհուրդի անդամոց ընտրութիւնը եւ ներկայցնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձերուն պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով ոք յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իբրև Եկեղեցւոյն նախանձախնդիր, պարտաճանաչ եւ անձնուէր անդամներ, կը վայելէն ընտրողներու վըստակութիւնը, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

Տիարք՝ նշան Քէչոյեան
Կէրի Մանկըրեան
Տտի Մարայտարեան
Վահան Քէչոյեան

Կ'օրէնենք Մխական Խորհուրդին նորընտիր անդամները եւ վստահ ենք ոք անոնք եւս իրենց ջանքները Միացնելով իրենց պաշտօնակիցներու աշխատանքներուն, պիտի զործեն ծուխիդ հոգեւոր օգտին, Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ Փառքին Համար:

Մաղթելով ձեզի կարողութիւն եւ յաջողութիւն.

Մնամք սիրոյ ողջունիւ
Աղօթարաբ

ՀԱՐԴԱՆ ՔՀՆՅ. ՄԿՐԵԱՆ
Առաջնորդի Փոխանորդ